

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՒԼՍԸՆԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ

Պ Ա Հ Ա Ն Ջ Ք Ը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԴԵՊ ԱՐԴԱՐ ԿԵՑՈՒԱԾՔԻ ՄԸ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՅՈՒՇԱԳԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ**

**«ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԵՍԷՆ ԱԻԵԼԻՆ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՎՏԱՐՈՒՄԸ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ Է»**  
Կ'ըսեն հարիւրէ աւելի աղանաւոր Ամերիկացիներ

Նիւ Իորք, 27 Դեկտ. — (Թասս).— Ամերիկահայ Ազգային Խորհուրդը մամուլին հաղորդած է հիմնադրութիւնը «Հայաստանի Հանդէպ Արդար Կեցուածքի մը Համար Պայքարող Ամերիկեան Կոմիտէի» Հրահայ Ազգային Խորհուրդը հրատարակած է պատճէնները իր և Ամերիկեան Կոմիտէին կողմէ՝ Արտաքին Գործոց նախարարներու Մտկոտայի Խորհրդատուներին ուղղուած հեռագիրներուն, որոնցմով այս երկու կողմակերպութիւնները կոչ կ'ընեն վերաքննել հայկական սահմանները, Սովետ Հայաստանին միացնելու համար ներկայիս Թուրքիոյ մաս կազմող նահանգները, զոր գերակշռող էր հայ բնակչութիւնը:

Ամերիկահայ Ազգային Խորհուրդին կողմէ Արտաքին Գործոց նախարարներու ուղղուած հեռագիրը կը յայտարարէ. «Ամերիկահայ Ազգային Խորհուրդը արտայայտելով՝ Սովետ Հայաստանի հիմնադրութեան 25րդ տարեդարձին առիթով, Ամերիկայի հինգ քաղաքներուն մէջ կատարուած, տօնակատարութեանց ընթացքին յայտնուած քաղաքները, ձեր ուշադրութեան կը յանձնէ համաշխարհային առաջին պատերազմին ընթացքին Թրքական սարսափի և հալածանքի դոճը եղող և ամբողջ աշխարհի երեսը ջրուած՝ մէկուկէս միլիոն Հայերու վեհակը: Արտասահմանի Հայերու ջախջախիչ մեծամասնութիւնը կ'ուզէ վերադառնալ իր մայրենի հողերը, որոնք տակաւին կը գտնուին Թրքական տիրապետութեան տակ: Այս Հայերուն ներգաղթը կարելի է գլուխ հանել այն առիտ միայն երբ հայկական հողերը մաս կազմեն Սովիէթ. Հայաստանի:

«Կը պահանջենք որ իրենց պատմական հայրենիքին ազատագրումովը արդարութիւն յոյս տրուի Հայերու հանդէպ: Հայաստանի սահմանները, այն ձեւով որ անոնք սրոշուեցան Նախագահ Ռուզուելի կողմէ, պէտք է դառնան սահմանները Սովիէթ. Հայաստանի:

Հայաստանի Հանդէպ Արդար Կեցուածքի մը Համար Պայքարող Ամերիկեան Կոմիտէին կողմէ Արտաքին Գործոց նախարարներու Խորհրդատուներին ուղղուած հեռագիրը կը յայտարարէ. —

«Բնակչութեան բոլոր խւերը ներկայացնող, աւելի քան հարիւր միլիոնի Ամերիկացիները վերջերս համախմբուեցան հիմնելու համար «Հայաստանի Հանդէպ Արդար Կեցուածքի մը համար Պայքարող Կոմիտէն»: Այս Ամերիկացիներն ու Ամերիկոհիները խորապէս վրդովուած են մեր ժամանակներու ամենէն մեծ անարդարութեամբ, և այն իրողութիւնով թէ Թուրք իշխանութիւններու վայրագութեանց և հարստահարութեան պատճառով ամբողջ աշխարհի Հայերու կէսին աւելին դուրս նետուած են իրենց հայրենիքէն:

«Իրենց հօրեայ պատմական աւանդութիւններէն խլուած մեծ թիւով Հայեր, ներկայիս կ'ուզեն վերադառնալ Հայաստանի Սովետական Հանրապետութիւնը: Անոնք նմանապէս կ'ուզեն միանալ իրենց հայ եղբայրներուն, որոնք Թուրքիոյ մէջ կ'ապրին նիւթական վառարար պայմաններու տակ:

«Այս կրկնակ նպատակը կրնայ իրականացուիլ, միմիայն Սովետ Հայաստանի կցուումովը ներկայիս Թուրք գերիշխանութեան տակ գտնուող հողերու, որոնք ցեղազրկական տուեալներու հիման վրայ, Հայաստանի մաս նկատուեցան կա-

խագահ Ռուզուելի կողմէ՝ որ 1920ին, դաշնակից Տէրութեանց Գերագոյն Խորհուրդին առաջարկով իրաւարարի վճիռը արձակեց:

«Աղգերու Դաշնակցութեան Նախագահին՝ 1920ին՝ ուղղուած նամակով մը, Ռուզուել կը շեշտէր թէ Միացեալ Նահանգները քաղաքիւ անգամներ իրենց վրդովմունքը յայտնած են Հայ ժողովուրդի նկատագրին և բարորութեան համար, այնպիսի ձեւով մը և այնքան սաստկօրէն, որ կ'արդարանայ այն յայտարարութիւնը թէ՛ Հայ ժողովուրդին ճակատագիրը միշտ մասնայատուկ շահագրգռութիւն մը ներկայացուցած է ամերիկացի ժողովուրդին համար:

«Միացեալ Նահանգներու Մեծ Նախագահին այս յայտարարութիւնը այնքան ճիշդ է ներկայիս որքան ճիշդ էր անցեալին: Այն նկատումները որ Նախագահ Ռուզուելը մղեցին Հայաստանի սահմանները որոշելու այն ձեւով որ ան որոշեց 1920ին, նոյնքան արդար են ներկայիս և հիմնաւոր՝ ցեղազրկական տեսակետով: Ընդհանրապէս համակրանքով տողորուած է հանդէպ այդքան տառապած այս քաջարի ժողովուրդին, որ նմանապէս ներշնչուած է այնպիսի ուղղուածքներով, որոնք մեր կարծիքով ճիշդ են թէ բարոյական և թէ քաղաքական նկատումներով: Կոմիտէն յարգանքով կը դիմէ Միացեալ Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ և Սովիէթ. Միութեան Արտաքին Գործոց նախարարներուն, ներկայիս Մուկըւայի մէջ կայացած բանակցութեանց ընթացքին համաձայնութեան դալու Հայաստանի սահմաններուն և Հայկական Հայրենիքին ստեղծումին շուրջ: Մենք կը նկատենք թէ Արտաքին Գործոց նախարարները պէտք է այս ուղիով քայլեն, առաջնորդուելով արդարութեան և մարդկայնութեան լուրջ նկատումներով:

«Հայաստանի Հանդէպ Արդար Կեցուածքի մը համար պայքարող Կոմիտէին» մաս կը կազմեն Ասիասահմանի Դաշնակցութեան Նախագահ Կրիմ, Ամերիկեան Քոնկրետի Դեմոկրատ անդամներ՝ Սեյլէն և Տրլայի, ինչպէս նաև հանրապետական Կրիմար, Մեսրոպուլիս Պեննսիլանի, Հայ Արհեստակարգու Գալֆայեան, մեծամուկ գրագէտ Տրայքը, լրագրող Տիւրանի, Գլարիչ Քենթ, Գիսնական Տօքթ. Բանդ, Սովետական Բարեկամութեան Խորհուրդի Նախագահ Լամոնդ, բեւեռախոյզ Սթեֆենսըն և ուրիշներ: